

դպրապետին, իսկ առաջնորդ մերոյ երկրին, Տոնուս գիւղ կոչեալ վանքին, Ուլնեցոյն սուրբ Ստեփաննոսին, Մերուն կոչեալ վարդապետին եւ Ձէյթունայ մեծ դղեակին, Սքանչեւագործ մենաստանին... Տիրամայր Աստուածածնին, եւ սուրբ Փրկիչ ուխտատեղին, սորա յաջորդ եռամեծին, հովիւ ընտրեալ այս նահանգին արի եւ քաջ ռարբունին, Կարապետ վարդապետին, եւ քանզի գրոյս սմին, Սարգիս երէց վրիպակին եւ վարդապետաց համանց նորցին, Որք երախտիք առ մեզ ունին եւ ստացող գրոյս սմին աստուածասէր Բերբացին, Ղուկաս անուամբ մահտեսին, որդւոց թոռանց որք ընդունին, եղ յիշատակ ի քաղաքին, Հալապ կոչեալ մեծ քաղաքին, յԱստուածածին եկեղեցին, վասն ընթերցման ի յատենին, որ ընթեռնու տայ զորդորմին, եւ ասիցէ զՀայր մեր յերկին, նոքա եւս յիշեալ լիցին, ի Բրիտոս յորն մեծին» (Յիշատակարան, 1653ին գրուած Յայսմաուրբի մը մէջ, Գալուստեան, Մարաշ, էջ 237):

8. ԱՐՄԵՆԻ ԿԱՍ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՆԱՊԱՏԸ

Լամբրոնի արեւելեան կողմը եւ անոր մերձ ու Արմենի լեռան հիւսիսային կողմն է այս անապատը, որ արդարացիորէն որակուած է Լարան (Հայաստան, 1850, թ. 73 եւ Ալիշան, Սիսուան, էջ 66 եւ 96): Անոր հիմնարկութեան պարագաները եւ շէնքերուն կարագրութիւնը կը մնան անձանօթ: Հին հաստատութիւն է եւ գուցէ յունական: Այժմեան աւերակները ենթադրել կու տան հոյակապ կառուցուածք մը. Տէր Ղազարեան կը գրէ՝ «Անոր վանքը կը գտնուի Սկեւոյ վանքին հիւսիսային կողմը Տաւրոս լեռան լանջին վրայ... վանքին եղած տեղը կը կոչուի Արմէնի լեռ: Աւերակը բաւական տարածուն է խոշոր քարերու կոյտեր իրարու քով դիզուած: Տեղ տեղ կարելի է որոշել սիւներու պատուանդաններ, աղեղնաւոր կամարներու հետքեր» (Բագմավէպ, 1952, էջ 98):

Անապատը գրուած է Ս. Նշանի եւ Ս. Աստուածածնի հովանաւորութեան տակ, բայց կոչուած է Ս. Յովանի վանք կամ Յովանի ազարակ (Հայապատում, էջ 502):

Շատ կանուխէն ծագկած վիճակ ունեցած ըլլալ կը թուի: Հոն է որ կը գրուի այն յարգի Կանոնադիրքը, որ այժմ Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի Մատենադարանին մէջ

խնամով պահուած է: Անոր յիշատակագրութեան կարեւոր մէկ մասն է.

«Փառք... Յորում Ժամանակի թիւ թուականիս Հայոց Շնէ — 1098 — ի Հայրապետութեան աստուածապատիւ Տեառն Գրիգորիսի, ի զարմէ սրբոյ Ս. Գրիգորի ամենայնի հարցն նմանեալ բարեկարգութեամբ եւ զի յոյժ խոռվութեան եւ բազմավրդով էր Ժամանակս ի բռնակալութենէ այլասեռից, զայլ ոմանս յիւրոց հարազատաց ձեռնադրէ փոխանակ իւր եւ ինքն զանխլաբար պանդխտանայ աղաւթից եւ վերձանութեան պարապելով: Էին սորա ուսումնակիցք վարդապետք սուրբք եւ առաքինազարդք արք վարժք յաստուածայինսն ուշ ունելով մարդարէական երանութեանցն յաւրէնս Տեառն խորհելովն ի տուէ եւ ի գիշերի, փոյթք յառնել եւ յուսուցանել եւ ճշմարտագէտք զեղովք ապաշխարութեան զբազումս արժանացուցին շնորհին:

Ի սոցա վարժարանէ այր ոմն Հեղամիա եւ բարեշնորհ ներհուն եղեալ մականցութեան արհեստի Գրիգոր անուն յոյժ ըղձափափազ տենչանաւք հրամայէ ինձ Յովհաննիսի գրել զաստուածայաւր կտակս ի յիշատակ բարեաց իւր եւ ծնաւդաց իւրոց, ի լուսաւորութիւն մտաց եւ ի մաքրութիւն հոգւոց եւ իմ նայեցեալ ի սէր սիրեցելոյն Աստուծոյ, անյապաղ փութով սկսայ ի մեծ եկեղեցւոյն Պառլահու եւ անդ նեղեալ յեղեռնաթոյն ոմանց առաջնորդաց ոչ Ժամանցի ի կէտ կատարման, զիմեցի յապահով եւ ի քրիստոսակարգ եկեղեցւոյն Յովհաննիսի անապատիս, ի զլուխ լերինս գունակ այն երեւելի քաղաքին, զոր Տէրն յԱւետարանին ճառէ, ուր են բնակեալ բազմութիւնն եղբարց խարազնագետից եւ երկնաջան գործաւորաց եւ մշտահառաչ աղաւթականաց երկուս աչս ունելով սրատես հոգւոյն ճառագայթիքն աստուածակոչք յառաջնորդական պաշտաւնն, որոյ երեցագունին Մեղեղէ անուն ճանաչի եւ փոխանորդին Գրիգորիս արք առաքինասէրք եւ բարեսէրք: Գիտացեալ զթերութիւն գործոյս եւ գիտակ եղեալ թէ որ կամակից լինին գործելեացն հաւասար են գործողացն հրամայեն լնուլ զպակասութիւն թերութեան գործոյս եւ բարեաց անուով ի Տեառնէ վարձս յանանց բարեացն»:

(Ապա կը պատմէ Սաչակրութեան շարժումը եւ կը յաւելու) «... Աւրհնութեամբ

յիշատակաւ յիշեալիք ի Գրիտոս Յիսուս զստացող գրոյս զԳրիգոր եւ զընկեր նորին զՅովհաննէս, որ ի չքաւոր աղքատութենէ բաւական արար մեզ գնիւթ եւ զծախս եւ զհայր Մեղեղէ եւ Գրիգորիս, որոց հրամանաւ եւ խնամաւք աւարտուին եղեւ ոգեշահ եւ բարեբեղուն եւ հոգեաւանդ կանոնացս: Եւ զտէր Սաչիկ, որ յերկար Ժամանակս անարատ սիրով եւ յաւժար կամաւք զաւրինակս ընձեռեաց:

Եւ զիս զՅովհաննէս, զվերջինս ի զընաց եւ զառաջինս ի պարտաւորաց, որ նշդեհութեամբ աշխատեցայ եւ յարմարեցի խոշորագանիւքս, սակաւ յիշման արժանացուցէք: Եւ Գրիտոս Աստուած... յիշելոցս եւ յիշողացը ողորմեցի... ամէն (Հանդ. Ամս. 1930, էջ 561—564, կամ Ակինեան Հ. Ն., Թուղթ Մակարայ Բ. Երուսաղէմի Հայրապետի, Վիեննա 1930, էջ 98 եւ Յովսէփեան, Յիշատ. Ձեռ., Ա., էջ 259—264: Մագաթի վրայ գրուած է Կանոնագիրքը որուն ընդարձակ յիշատակագրութիւնն է այս, ընդարձակ տեսած եմ զայն Նոր Զուղայի մէջ եւ մասեր մըն ալ անկէ լուսանկարած):

Արմենի Ս. Յովհանի անապատը երկարատեւ կեանք կ'ունենայ եւ բաւական թուով Ձեռագիրներ հոն արտագրուած են: Ան սիրելի եւ հաճելի վայրն էր Ստեփանոս Գոյներ Երեցանց վարդապետի: Հոն կրնար անխոռվ զընթեան նուիրուիլ:

Ա. 1290ին՝ «Ի Լուաննուոն խցկան ի հիւսիսակողմն թիկունս լերին որ կոչի Արմէն» կը գրուի Աւետարան մը (Հայաստան 1891, թ. 73 եւ Սիսուան, էջ 96):

Բ. Փառք... Դարձեալ լիալիր բերանով աւրհնութիւն Աստուծոյ որ արժանի արար զիմս անմաքրութիւն պիտակ անուն Երեմիա հետեւել բանի յանապատիս Արմէնի առ ոտս Գէորգայ վարդապետի: Ի թուիս Հայոց Ձեռ. — 1291 (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 2604):

Գ. Եւ արդ գրեցաւ սա — Հաւաքածոյ — յաշխարհիս Կիլիկեցւոց: Ձուրիտակէսն գրեցի ի լեռն Տաւրոսի յանապատին որ կոչի Արմէն, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին եւ Ս. Նշանին առ ոտս սուրբ եւ երջանիկ վարդապետին Գէորգայ յաւրինակէ նորին ի թու... Ձեռ. — 1297 (անդ, Երուսաղէմ, թ. 1303):

Գ. Գորգ կը գրէ՝ «Ես տրուալ Գորգ որ ի թիկունս Արմէնի նստիմ, յանապատս Յովանիսի պատահեցայ օրինակի գրոցս Յովհաննու Աւանցւոյն յարկեղս մեծ վանացն Սկեւոյի եւ խոշոր գրով փոխեցի զսա. եւ ի վերջս աւրինակին կայր գրեալ թէ Տեառն Գրիգորիսի է զերքս Հայոց քահանայապետի...: Արդ փոխեցի զսա ի յաւաքութիւն պիտանացուաց իրաց պէսպէս աւանդից ի զգուշութիւն ինձ եւ համաշունչ հարկակցի եղբար Սաչատրոյ վարդապետի եւ Աստուեղբար Սաչատրոյ մերոց Տէր յաջողեցէ. ծատրոյ եւ զկնի մերոց Տէր յաջողեցէ. զերեցաւ Ձեռ. — 1298 — թուիս ի փառս Աստուծոյ ամէն» (Սիսուան, էջ 96. Տաչեան, Մայր Յուց., էջ 730. Macler. Cat. Bibl. Nat. թ. 131. Մաղիկ, 1890—1891, թ. 25):

Ե. ... Որում խանդակաթ փափաքանօք իրբեւ տեսի, անյապաղ փութով շուրթափութեամբ խոշոր գրով աւարտեցի զցանթութեամբ խոշոր գրով աւարտեցի Փիլոնի կալի տառս (Մատենագրութիւնք Փիլոնի) եւս վահրամ սուտանուն սարկաւազս ի վանքս յիշումն ինձ եւ ի միթարութիւն հոգւոյ եւ մարմնոյ ինքնագիր երկօք ի ծոցն սնուցիչ մարմնոյ ինքնագրեալ տաճարի Աստուածամայր փրկչի Անապատիս Արմէնի ծածնի եւ սուրբ փրկչի Անապատիս Արմէնի եւ թէպէտ եւ տկար եւս էի ի գլխոյ մինչ գրեթէ յոգիս ապաստան եղեալ եւ յոգնեալ: Սակայն աւանակալ ձեռամբն Աստուծոյ օժանդակեալ հաղիւ հազ տաղնապաւ իմն, հասի յաւարտ ողորմելովն Տեառն...:

Արդ զորպիսի(՞) չարաշուկ եւ բազմավրդով ծանր աղետի աւուրս, ես ունայնացեալ եւ յոյժ խաւարածառանգս եւ պարտաւորեալ մեղօք Վահրամ Սարկաւազ, զոր մարթացայց ճառել զթշուառութիւնս, զոր Տէր Յիսուս ընդարձակուին արացէ: Նաեւ առ յապագայս հանդիպողս եւ ընթերցողս, կամ գաղափարօղս մաղթանք բարոյ յիշման արժանաւորել զհոգեւոր հայրն իմ եւ գուսուցիչ, որ իրբեւ զհոգ մաքրէ, զիմ մարմնական ախորժակս յաստուածայինս յորդորելով հանապաղ աննախանձաբար զՍտեփանոս Գոյներ Երեցանց... (Պողարեան Ն. փանոս Գոյներ Երեցանց, Մայր Յուց. Ձեռ. Սրբոց Յակովբեանց, եպ., Մայր Յուց. Ձեռ. Սրբոց Յակովբեանց, էջ 71—72. Հմմտ. Սիւրբուսաղէմ 1953, էջ 552):

5 Գորգի մասին գիտենք՝ «Նաեւ Գորգն այն որ բնակեցաւ ի յանապատն որ կոչի Արմէն, մերձ ի զղեակն Լամբրոնի, արար բազում աշակերտս... ասէր եթէ պարտ է ուտել միս (ի շարաթու, Հայապատում, էջ 552):

տրուութեան Հայոց Լեւոնի եւ ի սուրբ գերազրական անապատիս Արքայկաղնի: Ընդ հովանեաւ ամենազաւր աշոյն Յիսուսի եւ սրբուհւոյ Աստուածածնին եւ սրբոց հրեշտակապետացն Միքայէլի եւ Գարրիէլի եւ կենսակիր սուրբ Նշանիս սուրբ Կոստանդեայ: Եւ արդ գրեցաւ սա հրամանաւ սրբանունդ քճ. Կոստանդեա ի յիշատակ... եւս առաւել հարազատին իւրոյ Տեառն Ստեփաննոսի արքեպիսկոպոսի եւ առաջնորդի Արքայկաղնոյս⁸, զոր կացեալ եպիսկոպոսութեանն Դուկասու ժամանակս, վարելով զկեանս իւր հեզուութեամբ եւ խոնարհութեամբ ըստ սրբոց առաքելոցն, վերափոխի առ Քրիստոս ի թվ. 219 ի Մայիս ԺԶ...: Յիշեսլիք աղօթիւք զստացաւ զորոցս զԿոստանդին քահանայ ծնաւորիւք իւրովք եւ ամենայն զարմիւք: Եւս առաւել յերեսս անկեալ աղաչեմ զձեզ յոգնամեղ եւ անարհեստ զրիչս» (Սիւրմէեան, Յուց. հայ. Զեռ. Հալէպի, Ա., էջ 57):

Ստեփանոսի յաջորդութեան — թէ՛ անմիջորդակա՞ն, ժամանակի անջրպետը նկատելով՝ կասկածելի՞ — կը կոչուի Յովհաննէս՝

«Փառք... Գրեցաւ տետրակս այս ձեռամբ Գրիգոր քահանայի ի մայրաքաղաքս Սիս ընդ հովանեաւ սուրբ Նշանիս ի լաւ եւ յընտիր աւրինակէ Կոստանդեայ ի վայելումն զեռարոյս սարկաւազի Սիմէոնի եւ ծնաւորաց... արդ աղաչեմ թողութիւն հայցեցէք Սիմէոնի սարկաւազի եւ ծնաւորաց իւրոց, որ ստացաւ զսա ի յարգար վաստակոց իւրոց. ի թուականիս Հայոց է 244 (1312) ի հայրապետութեան Տեառն Կոստանդեա եւ ի թագաւորութեանն Հայոց Աւչնի, ընդ նմին զԳրիգոր քահանայ զգրուող սորա եւ զծնաւորսն իմ եւ զըռարոյս որդին իմ զՍարգիս աղաչեմ յիշել... եւ զտէր Յովհաննէս եպիսկոպոս եւ առաջնորդ Արքայկաղնոյն որ շնորհեաց Գրիգոր սարկաւազի զգին սորա եւ զծնաւորսն իւր» (Սաչիկեան, ԺԴ. դարի հայ. Զեռ. Յիշատ., էջ 88):

1298ին գրուած յիշատակագրութեան մը մէջ կայ՝ «Պատուական եւ ամենիմաստ քահանայ ոմն վանական սրբապետ ի սուրբ ուխտէն Արքայկաղնոյ Յովհաննէս անուն կամեցաւ ստանալ զսուրբ Աւետարանս ի յիշատակ... Այդ մինչդեռ զմագաղաթն եւեթ

⁸ Հո՞ս է որ 1275ին կը գրուի ժամագիրք մը (Սիւրմէեան, Մայր Յուց. հայ. Զեռ. Երեսպայի մատուցողաց, էջ 36):

պատրաստեաց ժամանեաց նմա վախճան մարմնոյ...» (Լալայեանց, Յուց. հայ. Զեռ. Վասպ., էջ 11. հմմտ. Հանդ. Ամս. 1955, էջ 230):

Հետեւեալ յիշատակագրութեան մէջ չէ յիշուած թէ անոր գրութեան ժամանակ վանքին առաջնորդը ո՞վ եղած է. Արդ գրեցաւ եղանակաւոր տաղարանս հին եւ նոր, զոր առաջին հայրքն են նշանակել ի թվականին ՊԽԳ — 1374 — ի հայրապետութեան Տեառն Կարապետի եւ ի թագաւորութեան Կիւրոսի ձագերի, որ եւ ի վերայ Հայոց այլ աւերհեցաւ եւ անուանեցաւ թագաւոր: Գրեցաւ սա ձեռամբ վերջին եւ մեղսաթաւալ եւ անարժան զձաւղի Եսայի արեղայի ի քաղաքս Սիս, ընդ հովանեաւ սուրբ Նիկաւրոսի եւ կենսակիր սուրբ Նշանաց Զորավանիցն եւ Արքայկաղնոյն եւ Վանկոյ սուրբ Նշանին եւ աշոյն սուրբ Լուսաւորչին ի լաւ եւ յընտիր աւրինակէ Յեսուս փիլիսոփային, որոյ Տէր ողորմեսցի, ի խնդիրս եւ ի փափաքս անձին իմոյ եւ եղբաւրն իմոյ Պետրոս արեղայի եւ յիշատակ ծնողաց մերոց Մարտիրոսի եւ հաւրեղբաւրն իմոյ Թաթէոսի քահանայի եւ մաւրն իմոյ Մարթայի եւ ամենայն ազգականացն կենդանեացն եւ հանգուցելոցն. ամէն (Սաչիկեան, ԺԴ. Դարի հայ. Զեռ. Յիշատ., էջ 607 եւ Հայաստան, 1852, Թ. 101):

Տարիներ վերջ — 1405 — կը գրուի դարձեալ Մանրուսում մը. Գրեցաւ եղանակաւոր տառս որ կոչի Մանրուսումն ի լաւ եւ յընտիր աւրինակէ... որ է յարմարած առաջին երաժշտապետացն սուրբ ուխտին Արքայկաղնոյն... (բայց կասկածելի թէ հոն գրուած. Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Էջմ. տ. 1405):

Ինչպէս գրեթէ բոլոր յիշատակագրութիւններէն պայծառ կը տեսնուի՝ Արքայկաղնի վանքի՞ մէջ յատուկ ուշադրութիւն դարձուած է Մանրուսումներու գրութեան եւ երաժշտութեան (հմմտ. Սիսուան, էջ 254. Էփրիկեան, Բնաշխ. Բառարան, Ա., էջ 343—344 եւ Սաչիկեան, ԺԵ. դարի հայ. Զեռ. Յիշատ., Ա., էջ 53):

(Շարունակելի:)

⁹ Արքայկաղնի վանքը եղած է տարարախտ Ստեփանի եւ Գրիգոր Ապիրատ կաթողիկոսի հանգստավայրը (Արարատ, 1888, էջ 351, Սիսուան, 254 եւ 505):

ՀԵԹՈՒՄ ՀԵՂԻ ՏԵՐ ԼՍՄԲՐՈՆԻ (1151—1218)

Ազնիւ իշխանական դէմք մը, «այր զգօն եւ մեծիմաստ եւ զբազէտ յոյժ¹»:

Հեթում որդին էր Օշին Սեբաստոսի, Լամբրոնի տիրոջ եւ Շահանդուխտ տիկնոջ, ծնած 1151ին² Լամբրոն անառիկ զղեակին մէջ: Ան անդրանիկ մանչ զաւակն էր, երէց եղբայրն Ներսէս Լամբրոնացոյ: Ծնած փառքի մէջ, ժառանգ Լամբրոնի, վախճանած խոնարհ վանական մը Դրազարկի վանքին:

Տակաւին գրկի զաւակ՝ խլուեցաւ իր «օրմէն, փրկանաւորելու իր հայրը, որ գերութեան մէջ էր: Օշին սեբաստոս մարտակէց Անդրոնիկոսի կայսերական բանակին՝ կերի ինկած էր Մսիսի առջեւ Թորոս Ռուզբեհնի ձեռքը (1152): Ան իբրեւ փրկանք մար 40.000 ոսկի, վճարելի երկու նուագով նախ առաջին կէսը. իսկ երկրորդին համար քաւական տալ իր անդրանիկ որդին Հեթում: Մանուկն եւ գումարին առաջին բաժինը յանձնելով Պարոն Թորոսին վերադարձաւ Օշին իր ամբողջը:

Սիրեց Թորոս իրեն աւանդուած դրաւականը. «զի էր տեսքով գեղեցիկ եւ իմաստուն»: Խանդաղատանքը թելադրեց իրեն փեսայացնել իր տան Հեթումը, հարսնացնելով անոր իր դուստրը: Կ'ընդունի առ այս Լամբրոնացիներու հաւանութիւնը: Մանուկը դեռ անկնունք էր. միտքով տուաւ եւ ըրաւ ձիաւոր. ապա պսակեց եւ հարսն ու փեսան ուղարկեց Լամբրոն, վերկանքի երկրորդ կէսը հաշուելով օժիտ իր աղջկան³:

Թէպէտ եւ կնքուեցաւ երկու իշխանական տուներու մէջ խնամութիւն, բայց քաղաքական յարաբերութեանց կը մնար կնճիտ մը անլուծելի: Լամբրոնի տէրը կայսերական իշխանութեան հարտակ էր եւ երդամբ իստատացած հաւատարմութիւն. այս հանգամանքով պարտաւոր զինուորական ծառայութեան երբ եւ ուր պահանջուի. ուստի նաեւ Ռուբինեանց դէմ: Նոյն երդումը երդուած

¹ Պատմիչ Կիլիկիոյ, Սիսուան, էջ 81:
² Սամուէլ Սիկեացի. Յիշատակարանք ձեռագրաց, Ա., էջ 543: Շահանդուխտ «ծնաւ յետ անդրանիկ զատերն» որդի Հեթում անունով ի Ռ. թուականին:
³ Մարտո, էջ 96:

էր նաեւ Թորոս⁴. բայց սա հետամուտ իր իշխանութեան սահմանները ընդարձակելու կ'ընդհարուէր նաեւ կայսերական բանակին՝ ընդհարուէր նաեւ կայսերական վարձկանաբու հետ: Այսպիսի դէպք մը պատահեցաւ 1165ին, երբ Օշին կայսերական վարձկանաբու զօրքի հետ ասպատակեց Տարսոնի գաւառը, զոր գրաւած էր Թորոս: Այս պատճառաւ թշնամացան Թորոս եւ Օշին, զորոնք հաշտեցնելու համար ուղարկուեցաւ Ներսէս Շնորհալի իբրեւ հաշտարար⁵: Թէպէտ հաշտութիւնը կնքուեցաւ, բայց Թորոսի եւ Օշինի մահէն (1168) ետքը յանթեղի ծածկուած կրակը միւսանգամ բորբոքեցաւ հետեւեալ պատահարը պատրուակ անելով:

Հեթում, որուն անտիական հասակին հարս տրուած էր Թորոսի դուստրը, չէր գտած զանի իր սրտին մօտ. «կ'ատէր». կ'ուզէր արձակել, բայց կը վախնար աներոջ զէր արձակել, բայց կը վախճանեցաւ Թորոս սրտամտութենէն. եւ երբ վախճանեցաւ Թորոս, հարսը «եհան ի տանէ իւրմէ», այսինքն ուղարկեց պարոն Թումասին, որ Թորոսէն պայլ կարգուած էր անոր Ռուբին որդւոյն⁶ (1168/9): Միւս, Թորոսի եղբայրն ու յաջորդը պատրուակ առած այս դէպքը գնաց պաշարեց Լամբրոնը «եւ շատ նեղութիւն պաշարեց Լամբրոնը «եւ շատ նեղութիւն պաշարեց» Լամբրոնացիներու, «ըստ որում հասցուց» Լամբրոնացիներու, «ըստ որում խիստ նեղէր զնոսս սրով եւ սովով» (1170)⁷:

Իսկ սպանուեցաւ 1175ին. իշխանութիւնն ձեռք առաւ Ռուբին. որ նոյնպէս «սկսաւ նեղել զԼամբրոն կոռով եւ սղաւեաց ամս երեք եւ յոյժ տառապեցոյց զնոսս... բայց չկարաց առնուլ⁸»:

Սմբատի յիշած «ամս երեք» անձիւր կ'երեւայ. վասն զի ժամանակակից մը՝ Սամուէլ Սիկեացի⁹ կը վկայէ, թէ Ռուբին մուէլ Սիկեացի⁹ կը վկայէ, թէ Ռուբին «բռնադատէր յափշտակել զայս աստուածատուր ամբոցս ի սոցանէ. յորում մնացեալ զամ մի ողջ յարգելանի եւ կրեալ զնորա թշնամութիւն՝ դարձեալ այցելութիւն առնէր Աստուած եւ ուղղէր սոցա զխաղաղութիւն: Եւ մանուկն Ռուբին ի գլուխ երկրորդ թիւն: Եւ մանուկն Ռուբին ի նոսա մին վճարէր մահուամբ եւ ինդրէր ի նոսա ներումն թողութեան մանկան առցանէ ներումն թողութեան մանկան առցանէ»:

⁴ Ն. Լամբրոնացի, Պատճառ խնդրոյ միարանութեան. Ընդհանրական թուղթք Ս. Ներսիսի Շնորհալու, Երուսաղէմ 1871, էջ 86:
⁵ Անդ:
⁶ Մարտո, էջ 100—101:
⁷ Անդ, էջ 101—102:
⁸ Անդ, էջ 103:
⁹ Յովսէփեան, անդ, էջ 547: